ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«—» ———————— 2024թ. **N____ Ն**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի ավագանին որոշում է.

1. Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածը լրացնել հետևյալ կետով.

«11.1. Քաղաքապետարանում կամ Ավագանու որոշած այլ վայրում Խմբակցություններն ապահովվում են կահավորված, տեխնիկական և կապի միջոցներով հագեցված առանձին աշխատասենյակներով, Երևանի իրավական ակտերի տեղեկագրով և օրաթերթերով: Ամեն խմբակցությանը հատկացվող աշխատասենյակները (չափը), կահույքը և տեխնիկական ու կապի միջոցները (քանակը) պետք է բաշխվեն խմբակցությունների միջև համամասնորեն, ըստ խմբակցության անդամների ու փորձագետների թվաքանակի՝ ընտրությունների արդյունքները հրապարակելուց հետո 20-օրյա ժամկետում:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այս առաջարկությունն ուղղված է գործող իրավակարգավորումն առավել հստակեցնելուն և խմբակցությունների շահերը պաշտպանելու համար առավել արդար հիմքեր ստեղծելուն: 2023թ. Երևանի ավանգու ընտրություններից հետո խնդիր առաջացավ առկա սենյակները խմբակցությունների միջև բաշխելու հարցում, ընդ որում առավել մեծաքանակ խմբակցությունը ստացավ ավելի փոքր սենյակ:

Սույն նախագիծն ուղղված է նման խնդիրները հետագայում բացառելուն:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան